Քրիստոնյայի անդրդվելիությանը հաջորդում են անմարդկային տանջանքները, որոնք տարբեր վկայաբանություններում տարբեր բնույթ են կրում:

Սյուժետային այս մասնավորությանը հաջորդում է ևս մեկ կայուն միավոր, որը թերևս վկայաբանության ժանրաստեղծ կաղապարներից է, քանզի դրանով է հիմնավորվում տվյալ քրիստոնյայի սպանության վկայագրության անհրաժեշտությունը, հետևաբար՝ նաև տվյալ վկայաբանության գոյավորումն իբրև տեքստ: Խոսքը վերաբերում է նահատակի վրա երկնային լույս իջնելու տեսիլներին: Ընդ որում՝ ամեն անգամ նշվում է, որ այդ իրադարձությանը ականատեսներ են եղել: Բերենք օրինակներ տարբեր վկայաբանություններից. այստեղ ևս տեքստային համընկնումներն ակնառու են. «***Եւ ի գիշերին այնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսովն, որ էջ ի վերայ նորա,*** զոր քրիստոնեայքն ամենեքեան, որք անդր էին ժողովեալք, ակներեւ տեսին ամենեքեան...» (էջ 403), «Եւ յետ աւանդելոյ հոգւոյն սրբոյ, ***փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս, զի լոյս պայծառ էր յերկնից ի վերայ նորա,*** և յեկաց յօգուտ ժամս. զոր և տեսին զօրականքն, որ մերձն կային և պահէին զնա, այլ և խանութպանք յոլովք, որք մերձ էին և արթունք...» (էջ 409), «***Եւ ի նմին գիշերի Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա լուսովն երկնային, որ էջ ի վերայ նորա,*** զոր ոչ միայն քրիստոնեայք, այլ և յոլով մահմետականք տեսին» (էջ 414), և այլն:

Տեսիլներին հաջորդում են հրաշքների վկայագրություններ այն մասին, թե ինչպես բազմաթիվ մարդիկ այցելելով նահատակների գերեզմաններին՝ բուժվել են տարաբնույթ հիվանդություններից ու ախտերից:

Պատմագրության ժանրային հյուսվածքում ներառվելով՝ վկայաբանությունը ևս ձեռք է բերում նոր համաբնագրին հարազատ նոր հատկանիշներ: Այդ կերպ՝ Դավրիժեցու